ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 16 մայիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի հոկտեմբերի 20-ին Երևանում ստորագրված «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2023 թվականի մարտի 9-ի N 298-Ա որոշմամբ հավանություն է տվել «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի մարտի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի հոկտեմբերի 20-ին Երևանում՝ տնտեսական աճի աջակցման և Կողմերի փոխադարձ ու արտաքին առևտրատնտեսական կապերի ընդլայնման համար Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման նպատակով:

Համաձայնագիրը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև (այսուհետ՝ Կողմեր):

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից:

2. Համաձայնագրով հիմնադրվում է Եվրասիական վերաապահովագրական ընկերություն (ԵՎԸ) (այսուհետ՝ Ընկերություն), որը կոչված է աջակցելու Կողմերի միջև փոխադարձ առևտրի, ներդրումների ծավալների մեծացմանը, տնտեսական ինտեգրման զարգացմանը, ներդրումային գրավչության բարձրացմանը և երրորդ

երկրների հետ Կողմերի առևտրատնտեսական կապերի ընդլայնմանը՝ Կողմերում ու երրորդ երկրներում ձեռնարկատիրական և (կամ) քաղաքական ռիսկերից արտահանման վարկերի (ներառյալ արտահանման աջակցության բոլոր ֆինանսական գործիքները), արտահանմանն ուղղված ֆինանսավորման և ներդրումների վերաապահովագրման ոլորտում գործունեության իրականացման միջոցով:

3. Համաձայնագրի անբաժանելի մաս է կազմում Ընկերության կանոնադրությունը, որով սահմանվում են վերջինիս՝ որպես միջազգային կազմակերպության, խնդիրները, գործառույթները, իրավական կարգավիճակի և ֆինանսական ապահովման առանձնահատկությունները, կառավարման մարմինների իրավասությունը, որոշումների ընդունման ընթացակարգը, ընկերության կանոնադրական կապիտալում հիմնադիր պետությունների մասնակցության մասնաբաժինները. ամրագրված է երրորդ երկրների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների անդամակցության, ինչպես նաև անդամակցության դադարեցման կարգը:

4. Ընկերությունը միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող միջազգային ֆինանսական կազմակերպություն է, ունի միջազգային իրավունակություն և իր իրավասության շրջանակներում իրավունք ունի կնքելու միջազգային պայմանագրեր:

Ընկերության մասնակիցներ կարող են լինել պետությունները և միջազգային ֆինանսական կազմակերպությունները՝ Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

5.1. սեփական շահերի պաշտպանության համար Ընկերությանը վերապահել այն նույն դատավարական իրավունքները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված են իրավաբանական անձանց համար (կանոնադրության հոդված 3, կետ 1, ենթակետ «գ»),

5.2. որպես Ընկերության մասնակից՝ կրել Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկերը Հայաստանի Հանրապետությանը պատկանող մասնաբաժնի արժեքի սահմաններում (կանոնադրության հոդված 3, կետ 2),

5.3. երաշխավորել Ընկերության կառավարիչների խորհրդի (այսուհետ՝ կառավարիչների խորհուրդ) որոշմամբ՝ Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան մասնաճյուղեր և ներկայացուցչություններ բացելու իրավունքը՝ հաշվի առնելով Ընկերության՝ որպես միջազգային ֆինանսական կազմակերպության, կարգավիճակի առանձնահատկությունները, ինչպես նաև դուստր ընկերություններ և կազմակերպություններ հիմնադրելու իրավունքը (կանոնադրության հոդված 3, կետ 5),

5.4. որպես Ընկերության հիմնադիր՝ դրա մասնակից դառնալու համար, Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած 30 օրացուցային օրվանից ոչ ուշ իրականացնել Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության Հայաստանի Հանրապետության մասնաբաժնի սկզբնական վճարումը՝ մասնակցության մասնաբաժնի առնվազն 25 տոկոսի չափով, որը Հայաստանի Հանրապետության համար սահմանված է կանոնադրության հավելվածին համապատասխան (կանոնադրության հոդված 4, կետ 2 և հոդված 6, կետ 1),

5.5. Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության մասնաբաժնի մնացած մասերը մարել ամեն տարի՝ 2 տարվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով, որոնցից առաջինը ենթակա է վճարման կանոնադրության 6-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան կատարված վճարումից հետո 12 ամսվանից ոչ ուշ (կանոնադրության հոդված 6, կետ 3),

5.6. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմնի կամ կազմակերպության կողմից մասնակցության մասնաբաժնի վճարումը կատարել անվանական արժեքով՝ ռուսական ռուբլով (կանոնադրության հոդված 6, կետեր 5 և 6),

5.7. կառավարիչների խորհրդում նշանակել կառավարության ղեկավարի տեղակալի մակարդակով 1 անդամ և դրա մասին պաշտոնական կարգով տեղեկացնել

մյուս մասնակիցներին և Ընկերությանը (կանոնադրության հոդված 11, կետ 2, պարբերություն 1),

5.8. ձեռնպահ մնալ Ընկերության վարչության նախագահի, վարչության նախագահի տեղակալների (եթե այդպիսիք կան), վարչության անդամների և աշխատակիցների կողմից իրենց պարտականությունների կատարման ժամանակ նրանցից որևէ մեկի վրա ճնշում գործադրելու ցանկացած փորձից (կանոնադրության հոդված 19, կետ 1, պարբերություններ 2 և 3),

5.9. Ընկերության կազմից դուրս գալու՝ Հայաստանի Հանրապետության մտադրության մասին կառավարիչների խորհրդին ծանուցման դեպքում Ընկերության գործունեությանը Հայաստանի Հանրապետության մասնակցությունը դադարեցնել Հայաստանի Հանրապետության և Ընկերության միջև հարաբերությունների կարգավորման ժամկետի և կարգի մասին համաձայնագրի կնքման օրվանից, սակայն կառավարիչների խորհրդի կողմից գրավոր ծանուցումն ստանալու օրվանից սկսած 6 ամսվանից ոչ ուշ (կանոնադրության հոդված 25, կետ 4),

5.10. իր նպատակների իրագործման և իր գործառույթների կատարման համար Ընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածքում շնորհել այնպիսի անձեռնմխելիություններ, առանձնաշնորհումներ և արտոնություններ, որոնք նախատեսված են կանոնադրության VI բաժնով և սահմանված են Ընկերության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված համաձայնագրերին համապատասխան (կանոնադրության հոդված 30, կետ 1),

5.11. Ընկերությանը տալ անձեռնմխելիություն դատական հետապնդման ցանկացած ձևի նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, որոնք Ընկերության լիազորությունների իրականացման հետևանք չեն կամ կապված չեն այդ լիազորությունների իրականացման հետ (կանոնադրության հոդված 30, կետ 2),

5.12. անկախ կանոնադրության 30-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ ոչ մի գործողություն չձեռնարկել և որևէ հայց չներկայացել Ընկերության դեմ, ինչպես նաև երաշխավորել այլ անձի, մարմնի և հաստատության կողմից այդպիսի գործողություններ չկատարելը, որոնք գործում կամ պահանջներ են ներկայացնում Հայաստանի Հանրապետության անունից (կանոնադրության հոդված 30, կետ 3),

5.13. երաշխավորել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ Ընկերության գույքի և ակտիվների անձեռնմխելիությունները խուզարկության, բռնագրավման, արգելանքի, առգրավման, ունեզրկման կամ առգրավման, կամ օտարման ցանկացած այլ ձևի նկատմամբ՝ նախքան Ընկերության առնչությամբ վերջնական դատական որոշում կայացնելը (կանոնադրության հոդված 30, կետ 4),

5.14. Ընկերության ամբողջ գույքը և ակտիվներն ազատել ցանկացած սահմանափակումից, կարգադրագրից և մորատորիումից (կանոնադրության հոդված 30, կետ 5),

5.15. երաշխավորել Ընկերությանը պատկանող կամ Ընկերության կողմից տիրապետվող արխիվների, գույքի, փաստաթղթերի, ինչպես նաև ցանկացած տեղեկատվության Հայաստանի Հանրապետության տարածքում անձեռնմխելիությունը (կանոնադրության հոդված 30, կետ 6),

5.16. Ընկերության պաշտոնական կապի համար Ընկերությանը տրամադրել այնպիսի բարենպաստ պայմաններ, որոնք չեն զիջում այն պայմաններին, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարությունը տրամադրում է ցանկացած այլ պետության, այդ թվում՝ դրա դիվանագիտական ներկայացուցչություններին, փոստային առաքումների, մալուխային հեռագրերի, հեռագրերի, ռադիոգրերի, հեռախոսից և կապի այլ միջոցներից օգտվելու առաջնահերթության, սակագների և դրույքաչափերի մասով, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների համար տեղեկությունների փոխանցման նպատակներով նվազեցված դրույքաչափերի կիրառման մասով (կանոնադրության հոդված 30, կետ 7),

5.17. Ընկերության կառավարիչների խորհրդի նախագահին և կառավարիչների խորհրդի անդամներին, տնօրենների խորհրդի նախագահին և տնօրենների խորհրդի անդամներին, վարչության նախագահին, վարչության նախագահի տեղակալներին (եթե այդպիսիք կան), վարչության անդամներին և աշխատակիցներին տալ ցանկացած ձևի անձեռնմխելիություններ, ծառայողական պարտականությունները կատարելիս, իրենց կողմից կատարված գործողությունների առնչությամբ դատական և վարչական հետապնդման նկատմամբ. վերոհիշյալը չի կիրառվում այդ անձանց գործողությունների, այդ թվում՝ ճանապարհատրանսպորտային պատա-

հարների հետևանքով քաղաքացիների կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման դեպքերում (կանոնադրության հոդված 30, կետ 8),

5.18. Ընկերությունը, դրա եկամուտները, գույքը և այլ ակտիվները, ինչպես նաև այն գործառնություններն ու գործարքները, որոնք Ընկերության կողմից Համաձայնագրին և կանոնադրությանը համապատասխան իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, ազատել հարկերից, վճարներից, տուրքերից և այլ վճարումներից՝ բացառությամբ այն վճարների, որոնք վճարներ են սպասարկման կոնկրետ տեսակների դիմաց (կանոնադրության հոդված 31, կետ 1),

5.19. հարկումից ազատել Ընկերության վարչության նախագահի, վարչության նախագահի տեղակալների (եթե այդպիսիք կան), վարչության անդամների և աշխատակիցների աշխատավարձն ու վարձատրությունը (կանոնադրության հոդված 31, կետ 2, պարբերություն 1),

5.20. կանոնադրության 31-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետությունում որևէ հարկով չհարկել ոչ մի պարտավորություն կամ Ընկերության կողմից թողարկված ոչ մի արժեթուղթ, ինչպես նաև դրանց մասով շահաբաժինները կամ տոկոսները՝ անկախ այն հանգամանքից, թե ով է դրանց իրավատերը (կանոնադրության հոդված 31, կետ 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2022 թվականի հոկտեմբերի 20-ին Երևանում ստորագրված «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

16 մայիսի 2023 թվականի
ՍԴՈ-1686